թղթերոյս մէկն ի յամիթ է եկեր եւ զնորա մէկ օրինակն Աւետիս կաթողիկոսն տարեր ի հետն, եւ մի օրինակն Ամթեցիք մեզ էին ուղարկեր ասելով թէ տեսէք զմեր կաթողիկոսին զնայտառակութիւնն, զայսպէս հերձուածողն դուք ինչպէս կաթողիկոս կու ընդունիք, եւ զայս եկեալ թուղթս մեք ամենեքեան ականատես եղեալ ընթերցաք։ . . . Եւ հինգերորդ գլուխն որ ասացաք վասն ֆռանգաց միաբանութեանն թէ ասես այն բանին ես կամակից չեմ երբ քու ձեռագիրն ի փափուն ձեռն լինի, նա քո այդպէս ասելն ինչ շահ ունի թէ Նորա կամակից չես. նա ամէն քաղաք թուղթ մի յուղարկէ թէ այն չՋաքարիա անուն հերձուածողն ի Հռոմ գնացեր է զՀաւատն ուրացեր ֆրանգ է եղեր այլ եւ յիմ բերնէն ձեռագիր է տուեր փափուն, թէ իմ աղգովն ֆռանգին հետ միաբան եմ. վասն այն պատճառին զայն չՋաքարիայդ բանադրել եմ եւ լուծեր եմ ի կարգէն, եւ յորոշեալ է յեկեղեցւոյ սրբոյ . . . ։ Եւ եթէ ոչ գրես այսպէս թուղթս, ահա ճշմարիտ կու լինի քո ձեռագիր տալն փափուն„ . . . ։

Կղեմէս Կալանոս ալ (Pars II, Tom. I, Roma, 1658, սկիզբը թղթ. 15՝՝) կը յիշատակէ այս դէպքը. "Զաքարիա Նորին քաղաքին (Կ. Պոլսոյ) Պատրիարգ։ Գնաց եւ ինքն ի Հռովմ այց առնել զնոյն սուրբ աթոռն Պետրոսի եւ պատուել զյաջորդն Նորա„։

Նոյնպէս Վարդան Արքեպ. Յունանեան կը յիշէ այս պարագաները իր "Քաջալերական